№ 204 ՆՈՅԵՄԲԵՐԻ 25 (ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7) 1878 ՆՈՅԵՄԲԵՐԻ 25 (ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7) № 204

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և ազգ օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1879 ԹՎԻՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետևեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամմն նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջապէս բաց անենք աչքերը։—Ներքին տեսութիւն։ Նամակ Գանձակից։ Նամակ Վ.-Ազուլիսից։ Նամակ Արմեանսկից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Նամակ Թիւրքիայից։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ՎԵՐՋԱՊԷՍ ԲԱՑ ԱՆԵՆՔ ԱՉՔԵՐԸ

Անգլեան անկասկած ամենաազատ և լուսաւորված երկիրներից մինն է։ Նա իր հիմնարկութիւնների և կառավարութեան ձևի կողմից մինչև անգամ միապետութիւն չէ, այլ հանրապետութիւն կարող է անուանվել։ Թագուհու իշխանութիւնը այդ երկրում մի բոլորովին կրաւորական ոյժ է։ Այո՛, նա գրեթէ հանրապետութիւն է, բայց ի՞նչ տեսակ հանրապետութիւն.... Կալուածատէր ազնվականութեան և գումարատէր բարժուաների, արիստոկրատիայի և բուրժուազիայի հանրապետութիւն է։

Պարզ է որ այդ տեսակ պետութիւն միշտ հիմնվում է ժողովրդի պահպանողական տարրերի վրա։ Ժողովրդի ստորին դասի մեծամասնութեան իրաւունքը գրեթէ ոչինչ չէ այդ տեսակ պետութեան մէջ։ Գուցէ ոչ մի երկրում ստորին, աշխատող դասը այնքան ճնշված, աղքատ, ողորմելի դրութեան մէջ չէ, այնքան հարստահարված չէ, որքան Անգլիայում։

Ինչպէս Անգլեան վարվում է իր սեփական երկրի մէջ, այնպէս էլ վարվում է նա և իր երկրից դուրս, իր նուաճած երկիրներում։ Այդ երկիրները իրան հաւատարիմ պահելու համար Անգլեան, նրանց ձեռք գցելուց յետոյ, նրանց մէջն էլ աշխատում է ոյժ տալ ժողովրդի հարուստ, հարստահարող, տիրող, ուրեմն պահպանողական դասակարգերին, աշխատում է հաստատել, օրէնքով սրբացնել ամբոխի վրա գուցէ և անարդար ճանապարհներով առանձին անհատների ձեռք բերած իրաւունքները։ Այդպէս վարվեց Անգլեան Հնդկաստանի մէջ. նա այդ երկիրը տիրելուց յետոյ, իսկոյն աշխատեց մշտապես և օրինական ճանապարհով հաստատել հարուստների, հողատէրերի, իշխանների ժամանակաւոր, բռնի իրաւունքները, ի վնաս ժողովրդի հարստահարված մեծամասնութեան։ Այդպիսով Անգլեան կարող է հաւատացած լինել, որ իր տիրապետութիւնը Հնդկաստանի վրա մշտապէս ապահոված կը լինի....

Ինչպէս Անգլեան վարվեց Հնդկաստանում և իր ուրիշ նուաճած երկիրներում, այնպէս էլ ի հարկէ նա կը վարվի և խեղճ Հայաստանի հետ, որ այժմ ընկել է նրա ձեռքը։

Ու արդէն այդ քաղաքական նենգաւոր ուղղութեան նշանները երևում են։

Անգլեան ի հարկէ կը պաշտպանի Թիւրքիայի ամբողջութիւնը և չի ուզենայ այդ երկրի զանազան քրիստոնեայ նահանգներին անկախութիւնը տալ, որովհետև Թիւրքիան նրա պարտապան է և շահասէր Բրիտանիան ամեն միջոցներ գործ կը դնի որ պարտապանին ընդունակ դարձնի իր պարտքերը վճարելու։

Բայց այդ բաւական չէ։ Թիւրքիայում առաջադէմ, շարժվող անբաւական տարրը՝ քրիստոնեաներն են, իսկ անշարժ, հարստահարող, պահպանողական տարրը՝ մահմեդականներն են։ Մեծ Բրիտանիայի քաղաքականութիւնը պահանջում է պաշտպանել հարուստներին աշխատողների դէմ, կալուածատէրերին մշակների դէմ, հարստահարողներին հարստահարվածների դէմ, պահպանողական, իր դրութեամբ բաւական տարրը անբաւականների, առաջադէմ ձգտումներ ունեցողների դէմ։

Նա այդպէս էլ կանի և արդէն անում է.... Դիցուք Հայաստանում անգլեացիները կը գտնեն Թիւրք կամ քիւրդ բէգերին որոնք բռնի ոյժով իրանց ձեռք են գրցել այս կամ այն հայ գիւղի հողերը։ Անգլեական քաղաքականութեան հաւատարիմ մնալով բրիտանական լուսաւորված ազգը յարգանքով կը վերաբերվի դէպի քիւրդ կամ Թիւրք կալուածատիրող ապօրէն իշխանութիւնը և կը շտապի օրինական ճանապարհով ճանաչել կալուածատիրոջ իրաւունքը, հաստատել նրան իր իրաւունքի մէջ մշտապէս.... Այսպիսով բոլոր բռնի և ժամանակաւոր իրաւունքները կը ճանաչվեն անգլեացիների ձեռքով, նրանք ինչպէս ամեն տեղ կը ջանան և Հայաստանի մէջ ստեղծել արուեստական կերպով մի ազնվական, արիստոկրատական դասակարգ, բռնութեան իրաւունքի վրա հիմնված, որպէս զի հեշտութեամբ կարողանան կառավարել երկիրը և երկրի հարստահարող, պահպանողական տարրի մէջ մի հաստատ նեցուկ գտնեն իրանց քաղաքականութեան համար։

Ահա ինչ է սպասում Թիւրքաց Հայաստանին անգլեական տիրապետութեան տակ։ Թիւրքը և քիւրդը գոհ կը լինեն, միայն հայը աւելի ճնշված և աւելի հարստահարված կը լինի, քան թէ առաջ։

Այդ վտանգին, մեր կարծիքով, կարող է և պէտք է առաջն առնի Ռուսաստանը, որին անհրաժեշտ կը լինէր զարթեցնել իր սահմաններին կից երկրի, Հայաստանի մէջ բնիկ ժողովրդի, հայերի ինքնաճանաչութեան և ինքնագործութեան գիտակցական զգացմունքը, ամեն միջոցներով ոյժ տալ հայերին անգլեացիների հետ մրցութիւն անելու նրանց ընդունակ դարձնելու համար և պատրաստել հայերին ապագայի համար, ինքնավարութեան համար։

Եթէ ոչ, վտանգ կայ, որ անգլեացիների շնորհով Ռուսաստանին հարևան երկրի մէջ աւելի և աւելի ոյժ կը ստանայ և վերջապէս սպառնող կը դառնայ մահմեդական տարրը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

17 Նոյեմբերի

Եկաւ Թեմ. վերատեսուչը, ժողովներ կազմեց, վճիռներ տվեց, բոլոր գործերը կարգի դրեց, վերադարձաւ գնաց. այդ միջոցում նամակագրիս վիճակված էր մասնաւոր տեղեկութիւններ հաւաքել հաստատ աղբիւրներից, (այդ էլ ի հարկէ ամեն ժամանակ չէ աջողվում) որովհետև ոչ փոքր քսակ ունէի, ոչ ժառանգած ազգասիրական անուն, ոչ բարձր պաշտօն և ոչ պինդ երես, որ անկոչ հիւրի պէս մտնէի ինձ կամ ուրիշին պաշտպանելու, որ գոնէ դրանց չնորհիւ բաղդ ունենայի ներկայ գտնվել այդ ժողովներին. կարճ կտրեմ։

Թեմ. վեր. անցեալ ամսի 17-ին գալով Գանձակ շտապում է միւս օրը հոգաբարձական ժողով կազմել, բայց թէ ինչ նիւթի վրա էր նրանց խօսակցութիւնը, դա գաղտնիք մնաց հասարակութեան համար, (բացի այն որպէս թէ տիկին Շերմազանեանցը արձակված է իր պաշտօնից) դրանից յետոյ ժողով է կազմում նա, հրաւիրում է քաղաքացիներից մէկ քանի պաշտօնակալներին և առուզ քսակ ունեցողներին, որոնք թւով չէին աւելի քան տասը։ Այն երեկոյեան Թեմ. վեր. պատմում է այն դրագրութիւնը և հանդամանքները որ ունեցել է նա հոգաբարձութեան հետ մայիս ամսից մինչև իր Գանձակ գալը, ի հարկէ այդ խօսակցութեան մէջ է մտնում և դրամագլխից 1500 ռուբլ ծախսելու հարցը, որ վճռված է հոգաբարձութեան, իր և առաջնորդի հաճութեամբը մի տարի ժամանակով և ոչ մշտապէս այն էլ իբրև փորձ։ Հրաւիրվածները, ի նկատի ունենալով այդ բոլոր խօսակցութիւնները, հոգա-

բարձութեան համաձայնութիւն, ժամանակի սղութիւնը, պատասխանում են, որ թէև փորձվածին կրկին փորձ չէ հարկաւոր, այնու ամենայնիւ երբ այդ ամենը այդպէս կարգադրված է և երբ այդ գումարը մսխվում է որպէս փորձ, մենք չէինք կամենայ մեր կողմից արդելք լինել, միայն կը ցանկանայինք որ պ. վերատեսուչը հարցաքննութեան ժամանակ զգար և անձամբ ներկայ լինելով իր խոստումները ուման առաջադիմութեան վերաբերմամբ գործնականապէս ցոյց տար։ Բայց երբ հարց են բարձրացնում ուսուցիչների կազմակերպութեան վերաբերմամբ, նա ուղղակի պատասխանում է. «այդ իմ գործս է, ձերը միայն 1000 րուբլ վճարելն էր, այդ էլ արդէն վճռեցիք, իսկ իմս հարցաքննութեանը յառաջադիմութիւն ցոյց տալը»։

Ինձ զարմացնում է այս դիպլոմաւոր պարոնի կարծիքը, որ նոյն երեկոյեան հարց է բարձրացնում, որպէս թէ մեր դպրոցները լինին պրոգիմնազիայի պատրաստական դասատուն, պարոնին այդ չէ աջողվում, յետոյ խօսքը մասնաւորելով խնդրում է վերատեսչից այնպէս կարգադրել, որ ցանկացողները այդ տեղից ուղղակի մտնեն պրոգիմնազիայի պատրաստական դասատուն. ի հարկէ այդ հարցը որքան հեշտ ցրելու հարց է եղել, այնուամենայնիւ նա ամբողջ ժամերով պարապացրել է ժողովը և վերջը անվճիռ մնացել։

Այդ ժողովը իմ կարծիքով պէտք է շատ լաւ վերջանար, ամեն կողմից, մանաւանդ մէկ լրագրի միջոցաւ շնորհակալութիւններ լսվէր, հրաժարականները յետ առնվէր, եթէ պարոնի մէկը առաջ չը կանգնէր և գանգատվելով վերատեսչին չասէր. «պ. Եպիսկոպոսեանը քանի որ շարունակում է մեր դպրոցների մէջ տեսչական պաշտօնը, երբէք պակաս չէ լինելու խռովութիւնը և դալմաղալը. մենք խնդրում ենք նրան հեռացնել տեսչութենից, յանձնելով միայն ուսուցչութիւնը և փոխանակ 600-ի տալ 800 րուբլ ռոճիկ»։ Ներկայ գտնվողներից երկուսը չեն կարողանում սառնութեամբ ընդունել այդ առաջարկութիւնը և սկսում են Եպիս. պաշտպանել։ Թեմ. վեր. ասում է. «դուք մի նեղանաք, Եպիս. ինքը չէ կամենում մնալ, չը նայելով որ ես քանիցս խնդրած եմ, իսկ եթէ դուք կը խնդրէիք, դա ուրիշ հարցէ, գուցէ համաձայնվի»։ Ժողովականներից ոչ մէկը չէ պատասխանում.

Ինչպէս լսում ենք Եպիսկոպոսեանը բոլորովին հրաժարվել է Գանձակի դպրոցներից, նրա թուաբանութեան դասերը յանձնվել են օրիորդ Խուբեանին և պ. Կալակուլովին, իսկ տեսչի պաշտօնակատարութիւնը Գ. քահանայ Թ.-ին վերջին տնօրէնութիւնը մեզ քիչ չէ զարմացնում.... ինձ թւում է որ պ. թեմ. վերատեսչի նպատակը եղել է, ոչ թէ բարեկարգել դպրոցները և մտածել նրանց ներքին կազմակերպութեան և յաջողութեան վրա, այլ մի կերպով վարագուրել, որպէս թէ բոլոր գործերը կարգի դրաւ. մեր այս կարծիքը ցոյց կը տայ մտ ապագան։

Որքան լսում ենք թեմ. վերատեսչի կազմած շտատը մնում է անփոփոխ և բոլորեքեանք հասած իրենց նպատակին։ Ահա ինչպէս. պ. Շերմազանեանցը իր ամուսնու հետ ստանում է 900 րուբլ, տուն և վառելափայտ. օրիորդ Խուբեանը 600 րուբլ, Գ. քահանայ Բաքաքեխեանցը 300 րուբլ, Համասիւռեանցը 200 րուբլ և այլն և այլն. թէև անշուշտ մեզ պարտ էր ուսումնարանի մուտքը և ծախքը մանրամասնօրէն հաղորդել, բայց այդ տեղեկութիւնը չունենալու պատճառով թողում եմ, յուսալով մեր հոգաբարձուների ազնուասրտութեան վրա, որ նրանք չեն մերժի ցանկացողների խնդիրը հրատարակելով մանրամասն հաշիւը։

Ասացինք, որ բոլորեքեանք հասած են իրանց նպատակին, պարզենք. թեմ. վեր. հասաւ իր նպատակին անչարժ պահելով իրեններին, և որ կարծում էր թէ սաստիկ վրդովված են Գանձակում (այսպիսի կարծիքը հիմնված էր ազնուասիրտ ազգասէրների հեռագիրների և նամակների վրա) դրա հետքը անգամ չը տեսաւ, հոգաբարձութիւնը հասաւ իր նպատակին, հրաժարված տեսնելով Եպիսկոպոսեանցին։ Եպիսկոպոսեանցը մխիթարվեց հրաժարեցրած տեսնելով յաջորդին հոգաբարձութեան նախագահութենից. ուսուցիչները հասան իրենց նպատակին որոնք որ սպասում էին թէ հեռանալու են ասպարէզից մնացին իրենց տեղը և բոլորեքեանը ստացան առատ ռոճիկ, միայն աշակերտները զրկվեցին Եպիսկոպոսեանցի թուաբանութեան դասատուութենից։

Այս ամենը պատմելուց յետոյ մի համեստ հարց կը տայի մեր յարգելի հոգաբարձուներին. ինչից ստիպված նրանք խօսեցին շատի դէմ, չէ՞ որ նրանք աւելորդ էին համարում վարժուհիներից մէկին. նրանք որ Շերմազանեանցին կամենում էին պահել 600 րուբլ ռոճիկով առանց տուն և վառելափայտի, ինչպէս եղաւ որ համաձայնվեցին այդքան ահագին գումար տալ. միթէ դրանք բաժանվեցին, կատարվելով թէ «բաժանեա զի տիրեսցես», և իրաւ եթէ այդ շտատը նոյնութեամբ պէտք է մնար, միթէ Եպիս. դրանց հետ սաղ չէր դայ. յուսով եմ որ յարգելի հոգաբարձութիւնը այս հարցերին կը պատասխանէ։

Երրորդ անգամն է որ թեմ. վեր. գալիս է Գանձակ, վերջապէս մտաբերեց վիճակի դպրոցները։ Նա այստեղի դպրոցների կարգադրութիւնը անելուց յետոյ իսկոյն կարգադրում է այցելութիւն գնալ գիւղերի դպրոցներին. ճշմարիտը խոստովանեմ մի և նոյն դպրոցների վերաբերմամբ հակառակ լուրեր եմ լսում, այդ իսկ պատճառով ես ինձ իրաւունք չեմ համարում ոչ լաւը և ոչ վատը ասել, մինչև հիմնաւոր տեղեկութիւն ստանալը. եթէ մեզ կը յաջողվի բոլոր դպրոցների կազմակերպութեան հետ ծանօթանալ, կը խօսենք աւելի մանրամասը։

Շ.

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ։

—

9 Նոյեմբերի

Ագուլիսը հեռվհետէ կորցնում է իր զարնանային գեղեցկութիւնը։ Նա այժմ նմանում է մի ծերունու, որ աշխարհի բոլոր երջանկութիւնները, ուրախութիւնները վայելած փակված է իր տան չորս պատերի մէջ։ Գոնեա մինչև այժմ կարելի էր ժամանակ անցկացնել թէ այգիներում և թէ պարտէզներում, իսկ այժմ մի կողմից երիտասարդների սակաւութիւնը, միւսկողմից սաստիկ ցուրտը, սառիլում են մարդու մտնել մէնակ տուն և փակվել սենեակի մէջ, առանց ոչ ոքի երես տեսնելու (մեզանում սովորութիւն չէ միմեանց մօտ հաւաքվել և խօսելը)։ Զը գիտեմ ազուլեցիք ինչպէս են ժամանակ անցկացնում ձմեռը, մանաւանդ գիշերները, որովհետև մենք չունենք մի թատրոն, կլուբ, որ նրանով կարողանայինք անցկացնել ձմեռվայ երկար գիշերները։

Նորերումս զոնախլղութիւնը (հիւրասիրութիւն) ազուլեցիք սկսել էին գիշերով անել։ Դա շատ լաւ միտք է և փոքր ի շատէ կարելի էր այդպիսով ժամանակ անցկացնել, բայց ափսոս որ դա բացառութիւն է։ Շատ ցանկալի կը լինէր, որ մէկը միւսից տեսնելով օրինակ առնէր այդ և սովորութիւն անէր իր համար։ Մի այդպիսի հիւրասիրութեան մէջ, պ. Բ. Տէր-Միքայէլեանցի տանը, ուր ժողովված էին մօտ քառասուն հոգի ազուլեցիներից, ճաշի ժամանակ պ. Ց. Մելիք-Յակոբեանցը բարձրանալով տեղից մի տօստ առաջարկեց։ Ես կը գրեմ այստեղ նրա խօսքերից այնքան, որքան յիշում եմ։—Ուրիշ տեղերում, ասաց նա, այսպիսի հիւրասիրութիւնները միշտ վերջանում են բարեգործական նպատակով, կամ սատրագրութեամբ, կամ թէ չէ հիմնարկութեամբ։ Ես կամենում եմ առաջարկել ձեզ մի տօստ,—այն է բանալ Ագուլիսում մի ընկերութիւն, որի նպատակը լինէր ժողովրդի չքաւոր դասից ուսուցիչներ պատրաստել և ընկերութեան հաշով գրքեր տպել տալ։—Պարոնի առաջարկութիւնը մեծ սիրով և համակրութեամբ ընդունվեցաւ։ Մի քանի ժամանակից յետոյ ինքը պ. Մելիք-Յակոբեանցը պատրաստեց մի նախագիծ (պրոգրամմա) «Գողթնեաց լուսաւորչական ընկերութեան» համար. Այս վերնագրով է դրոշմված ապագայ ընկերութեան ճակատը։ Ընկերութեան անդամները բաղկացած կը լինեն մի նախագահից, մի գրագրից և 6 հիմնադիրներից իրանց օգնականներով։ Երբ որ ընկերութիւնը կունենայ մի որոշեալ թիւ հիմնադիրների, այն ժամանակ կառաջարկվի կառավարութեան թոյլատուութիւնը ստանալու համար։ Իւրաքանչիւր հիմնադիր պէտք է տարեկան վճարէ հինգ-հինգ րուբլի. կանայքը ևս կարող են մասնակցել այս գործում։

Թէև փոքր ինչ դժուարութեամբ, բայց մեծ եռանդով շարունակվում է ստորագրութիւնը։

Վերջացնելով նամակս, ցանկանում եմ իմ բոլոր սրտէ Գողթնեաց լուսաւորչական ընկերութեան կատարեալ յաջողութիւն և պ. Մելիք-Յակոբեանցին կարողութիւն ու արիութիւն այդ իր առաջարկած գեղեցիկ գործը յառաջ տանելու համար։

Գողթնեցի

ՆԱՄԱԿ ԱՐՄԵԱՆԱԿԻՑ

—

10 Նոյեմբերի

Ես մտաբերում եմ դեռ ևս, որ խոստացած էի շարունակել թղթակցութիւն ձեզ հետ օրական հարցերի մասին, և առաջին իսկ անգամից յայտնած էի այն միտքը, թէ՝ Արմեանսկ քաղաքի ազգային ուսումնարանը շատ անմխիթար դրութեան մէջ է ժողովրդոց ուսուցիչ ընտրելու վերաբերութեամբ ունեցած երկպառակութեան պատճառով։

Բարեբաղդաբար այս տարի այդ երկպառակութիւնը միութիւն կազմեց և տեղացի մի երիտասարդ ընդունվեց ուսուցիչ։ Այս դէպքում թէ և ծերերը յաղթող հանդիսացան, այնու ամենայնիւ երիտասարդները ևս խելօք դտնվեցան, որ հասկացան երկպառակութեան վնասը և միութեան օգուտը։ Ընտրվեցան նոյնպէս քաղաքիս պատուաւորներից երկու անձինք հոգաբարձուուսումնական մասի համար մեծարգոյ Միքիթ Քարքաշեանցը, որ տեղիս հաշտարար դատաւորն է. (այս ևս մի ուրախական երևոյթ է որ տէրութեան ծառայութեան մէջ գտնվող մեր ազգայինք ցանկանում են վարել պաշտօն ազգային գործերի մէջ յօգուտ յառաջադիմութեան մանկանց ազգիս)։ Իսկ տնտեսական մասի համար պ. Բաղդասար Մելքոնեանց, երկուքն ևս ունեն եռանդ և յարմարութիւն իրանց պաշտօնի մէջ որոնք հաստատվեցան վիճակիս գերապատիւ փոխանորդից համաձայն ժողովրդոց առաջարկութեան։

Արմեանսկը քաղաքամաս է համարվում Պերեկոպ քաղաքի, որ ունի միայն երկու տուն հայ բնակիչ, և որ ընկած է Ղրիմ թերակղզու Ռուսաստանի հետ միացնող պարանոցի հիւսիսակողմը, երկու տաճկական ամրոցների մէջ տեղումը, որտեղ կայ և մի հնադարեան ջրանցք այժմ չորացած, որ շղթայի պէս երկարացած է Ազովից մինչև Սև ծովի ծայրերը և ինչպէս կերևի ժամանակով միացած էին այս երկու ծովերը միմեանց հետ։

Հայերի մեծամասնութիւնը, որ թւով եօթանասուն տուն է համարվում, բնակվում է Արմեանսկի մէջ։ Հայերը առաջ այստեղ համբաւաւոր ժողովուրդ էին աստուածապաշտութեան կողմից ամբողջ Ղրիմի մէջ, այժմ թէև պաղած չեն համեմատելով միւս քաղաքների հետ, սակայն առաջվան պէս չեն, պատճառը պաղութեանը համարում են կիրակի օրերում նշանակված փոքր ի շատէ յաջող առուտուրը, որ լինում է գիւղացիների հետ, որոնք կիրակի օրերը միայն ժամանակ ունեն գալ քաղաք սայլերը լիքը բերքերով։ Զը նայելով այն ամեն անաջողութեանց, որ պատճառած են հանգամանքները, մանաւանդ Սևաստապօլեան երկաթուղին որ այս քաղաքից հեռու է գնում սրանից 100 վերստաչափ, այսու ամենայնիւ Արմեանսկի բարեբաշտ ժողովուրդը ունի և պահում է մի աւելի փառաւոր եկեղեցի, որպիսին գեղեցկութեան կողմից նրկատելով չունեն Ղրիմի միւս հայաբնակ քաղաքները, թէև հարուստ լինեն սրանից. մաքրութեան կողմից նոյնպէս գերակշռութեան մէջ կարող է համարվել Արմեանսկի եկեղեցին։ Այս ևս ժողովրդոց համար մի գեղեցիկ և ամենաբնտիր յատկութիւններից մինը կարելի է համարել, որով զարդարված է այս քաղաքի բարեպաշտ հասարակութիւնը։ Ունեն մի ծխական ազգային դպրոց եկեղեցու բակի մէջ, որտեղ ուսանում են 30 աշակերտներ, ազգային և տէրութեան լեզուները քանի մի կարևոր առարկաների հետ միասին։ Այս դպրոցը Վեհափառ Կաթուղիկոսի հրամանաւ ստանում է տարին 300 րուբլ Ղրիմի տուրք խաչ վանքի կալված հողի վարձից, որ գտնվում է այս քաղաքին մօտ. և բացի այս ունի նոյնպէս մասնաւոր եկամուտ քաղաքում ունեցած իր անշարժ կայքերից, որով հաղիւ կարողանում է պահել չափաւոր ռոճկով երկու ուսուցիչ տէրութեան և մայրենի լեզուների համար։ Վերջապէս ժողովուրդը մեծ յուսով սպասում է կազմել պտուղ ուսուցչաց աշխատութենից և յարգելի հոգաբարձուների հոգատարութենից. մեծ է և իմ յոյսը այս մասին, բայց և այնպէս ոչ սակաւ ցաւ է իմ սրտիս և այն որ անկարանում է Արմեանսկի հայ հասարակութիւնը պահել և մի օրիորդաց դպրոց, որը նոյնքան և աւելի անհրաժեշտ է քան արականը, որի մասին թողնում եմ մի ուրիշ անգամ խօսելու, և խնդրում եմ, յարգոյ խմբագիր, չնորհել մի փոքրիկ տեղ «Մշակիդ» էջերում։

Օգսենտիոս քահանայ Հայրունի

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս 15 Նոյեմբ.

Թիֆլիսի գործակատար դասի խղճալի դրութիւնը թէև մի քանի անգամ տեղական լրագիրներում նկարագրված է, բայց նոցա աննախանձելի դրութիւնը ցարդ մի և նոյն է մնում.

Երկու տարուց աւելի է որ այստեղ գործակատարների մի ընկերութիւն կազմվեցաւ, և որի կանոնները անցեալ տարի փոքրիկ տետրակով հրատարակվեցան, բայց յայտնի չէ թէ ինչ պատճառով այդ բարեգործ ընկերութեան կանոնները դեռ ևս գործադրութեան ոչ մի քայլ չեն արած։ Ազնիւ ընթերցող, ոչ ես իրաւունք ունեմ և ոչ էլ իմ նպատակն է այդ ընկերութենից գործադրութեան հաշիւ պահանջել, ես յոյս ունեմ թէ շուտով լոյս տեսնելով այդ ընկերութեան օգտակար գործունէութիւնները ձեռնհաս կը լինեն օրից օր բարւոքել տեղիս գործակատարների ողորմելի դրութիւնը, փրկել նրանց կրած անգութ նեղութիւններից, և լոյս աշխարհ հանել այն հարատահարիչ պարոնների անտանելի վարմունքը, որոնք գործ են ածում մեծ մասամբ իրանց խեղճ գործակատարների վրա։ Այս խօսքերիցս թող չը վիրաւորվեն այն պարոնները, որոնց բարեխղճութիւնը յայտնի է շատերին։

Մի տեղ կարդացի, որ մեծ զանազանութիւն է դրված Եւրոպայի տէրութիւններում և Թիֆլիսում եղող գործակատարների մէջ։ Եւրոպայի մէջ գործակատարները ընդունված են որպէս գործունեայ և պատուաւոր անձինք, նրանք իրանց պաշտօնը կատարում են ամենահաւատարմութեամբ, նրանք բոլոր ջանք գործ են դնում ապրանքներ ծախել, և որքան կարելի է քաղցր խօսքով ու գրաւիչ ձևերով վարվել մուշտարիների հետ։ Եւ իրաւի այս են գործակատարի գլխաւոր պարտականութիւնները, և որ ամեն վաճառական իրաւունք ունի պահանջել իր գործակատարից։ Իսկ այստեղի վաճառականի պահանջը այս է,—գործակատարը աշխատելու է միշտ, փտած, հին, ու ցեցի կերած և այլ կերպով վնասված ապրանքները ծախել, սաղացնել և որքան կարելի է խաբել մուշտարուն սուտ երդմամբ, և այլն և այլն և այլն, որոնք մի առ մի յիշելը այստեղ աւելորդ կը համարեմ։ Այստեղ նոր և լաւ ապրանքներ ծախելը միմիայն վաճառատիրոջն է պատկանում, գործակատարը նոր խրիդից այսինքն նոր ստացած ապրանքից այն ժամանակ միայն կարող է ծախել երբ որ հին ապրանքները արդէն սաղացրած կը լինի։

Պատահել է ինձ ականատես լինել մի պ. վաճառականի, որ անպատուում և հայհոյում էր իր գործակատարին, այն պատճառով որ այդ խեղճը նոր ապրանքից 3½ արշին դրափ էր ծախել. «այդ քեզ համար չեմ բերել որ դու ծախես» բղաւում էր նա, «եթէ կարող ես հին ապրանքներից ծախիր, եթէ ոչ այդպիսի լաւ ապրանքը պէտք է որ ես ծախեմ»։ Ահա թէ ինչեր են պահանջում այստեղի վաճառականները իրանց գործակատարներից, և այս յայտնի պատճառով այստեղի գործակատարները ամենևին համարում չունեն թէ տեղացի և թէ օտարաքաղաքացի ապրանք առնողների մօտ։ Ի հարկէ ինչ կարող է անել այն գործակատարը որին հրամայում են այս ինչ ապրանքը իր նշանակած գնից պակաս չը ծախել, իսկ երբ մի և նոյն ապրանք պահանջողը դիմում է ապրանքատիրոջ իր կարծածից աւելի զիջումն է ստանում. այս է ահա այստեղի վաճառականների մեթոդը բացառութեամբ փոքրաթիւ պարոնների։

Մի շաբաթ առաջ հարկաւոր էր ինձ մի քանի արշին մահուդ գնել, մտնելով Թամամշովի քարվանսարայում հանդիպեցայ մի անծանօթ պարոնի, որի մագազինում պատերի վրա քաչ էր արած թղթեր այսպիսի գրուածքով (Продажа безъ запроса) առուտուր առանց սակառկութեան. երբ ներս մտայ մագազինում պ. վաճառականը զբաղված էր երկու ռուս պարոններու վրա մի քանի արշին տրիկո ծախելով, այդ պարոնը չափազանց երկարաբանութիւնից և սարսափելի երդումներից յետոյ երբ տեսաւ որ առնող պարոնները չեն համաձայն իր պահանջած գինը վճարել, սկսաւ ասել—«պարոններ, վերջապէս ուշադրութիւն դարձրէք այն բանի վրա որ դուք պատիւ ունիք ապրանքատիրոջ հետ առուտուր անել և ոչ թէ գործակատարների հետ»։ Այս խօսքերի վրա, նրա գործակատարների դէմքերը կարմրեցան. ով գիտէ թէ այդ րոպէին նրանց սրտերից ինչեր անցկացան.... Ազնիւ վարմունք որ յայտնում է մուշտարուն հաւատ չընծայել իր գործակատարներին։ Լսելով այս....խօսքերը

գլխարկս ծածկեցի ու դուրս եկայ, և հազիւ մի քանի քայլ մագազինից հեռացել էի յանկարծ միտս եկաւ իմանալ թէ ով էր այդ պարոն վաճառականը. յետ նայեցի տեսայ մագազինի դրան վրա հայերէն տառերով այսպէս էր գրած. «վաճառատուն մահուդի Ե. Ի. Պ...եանցի։ Հետաքրքրութիւնից չարժելով մի քանի տեղեկութիւններ ստացայ այդ ազգասէր պարոնի մասին... Ի Թիւս որոց և այս թէ ամեն ամիս երկու գործակատարներ են փոխվում դրա մօտ։

Օտարական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՆԶԱԿԻՑ մեզ գրում են. «Երկու ամիս սըրանից առաջ մի 15 տարեկան հայ աղջային թիւրքերից մէկը փախցնում է նրան մահմետականութիւն ընդունել տալու նպատակով։ Գործը չարունակվում է քննիչի մօտ։ Օրերումս տղային յանձնել են պօլիցիական վարչութեանը։ Այստեղ ալիւրի պուդը արժէ 1 ր. 20 կ., ցորենի պուդը 1 ր.—1 ր. 20 կ., իւղը 16 ր., մսի ֆ. 10 կ., ոչխարինը 10 կ., տաւարի 9 կ.»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

«Մասիս» լրագրին գրում են հետևեալը Եւդոկիայից, հոկտ. 18-ից։

«Բաւական ժամանակ է որ այս քաղաքի ազգային վարժարանն անխնամ մնացած է։ Թաղական խորհուրդներ կան այստեղ, որք կը կարծեն թէ եկեղեցական կալուածներն և եկամուտներն իւրեանց անձնական սեփականութիւն եղած են, և երբ Ազգ. Վարչութիւնն կառաջարկէ որ եկեղեցիներն օգնեն վարժարանին, կը յանդգնին հակառակիլ և ազգին դրամն խնայել ազգին։ Զեն մտածեր որ եթէ այսօր վարժարան չունենան, քիչ ժամանակէ յետոյ ոչ տիրացու և ոչ ալ տէրտէր պիտի ունենան. գէթ կարդալ և գրել սովրեցուցող մի վարժապետի ալ ամսական վճարել կը դժամակին։ Գեր. Առաջնորդն ամեն կիրակի եկեղեցիներն երթալով կը քարոզէ ժողովրդին թէ առանց վարժարանի փրկութիւն չը կայ ազգին, և եկեղեցիներն պէտք չէ խնայեն իւրեանց դրամներ վարժարանի համար։ Ժողովուրդն կարթնայ, բայց դեռ մի քանի թաղ. խորհուրդներ երազներով ժամանակ կանցունեն։ Վերջապէս Առաջնորդն, Գեր. Յակոբոս եպիսկոպոս Ձգնաւորեան, խնդիրն կը ներկայացունէ Գաւառական Ընդհ. Ժողովին որ կորոշէ անպատճառ բանալ վարժարանն, ծախքն եկեղեցիներէն վճարուելով։ Եւդոկիայի մէջ 7 եկեղեցի և 2 վանք կայ և 1500 տուն Հայ բնակիչ. զարմանալի չէ՞ ուրեմն որ գոնէ մի վարժարան չը լինի այդ քաղաքի մէջ։ Ս. Մինաս եկեղեցին միայն, իւր կալուածներէ և պատրաստ դրամէ զատ, 800 Օսմ. լիրայի չափ արծաթէ աւելորդ զարդեղէններ ունի. բայց իւր Թաղ. խորհուրդն անսասելով Գաւառական ժողովի որոշման և Քաղաքական ժողովէն մի քանի անգամ կրկնուած պաշտօնական գրութիւններուն, կը պնդէ թէ կարողութիւն չունի որ դրամ տայ վարժարանի համար։ Ազգ. Վարչութիւնն հաշիւ կը պահանջէ, հաշիւ չեն տար. վերջապէս լուծուած կը հրատարակէ այդ Թաղ. խորհուրդն և կը կնքէ հաշուետուամարներու պահարանն։ Երէկ Ազգ. Վարչութիւնն Համաթաղական ժողով գումարեց Առաջնորդարանի մէջ, ուր ներկայացաւ նաև Ս. Մինաս եկեղեցւոյ Թաղ. խորհուրդն, գրաւոր կերպիւ խոստանալով որ այսուհետև կատարելապէս հնազանդի վարչական հրամաններու։ Այդ Համաթաղական խորհուրդն որոշեր է որ անձնիւր Թաղ. խորհուրդ իւր կրցածին չափ ամսական վճարելով Ոսկեան վարժարանի ծախքերն հոգան իբրև կեդրոնական Թաղային վարժարան, առ այժմ 6 Օսմ. ոսկի չափ ամսական ծախքով։ Այդ վարժարանի մէջ պիտի դասախօսուին Հայերէն ընթերցանութիւն և գրավարժութիւն. ուրեմն տիրացու ժողովուրդ միայն պիտի պատրաստուի։ Կը լսենք թէ Ազգ. վարչութիւնն ալ կաշխատի ուրիշ եկամուտներ ճարելով՝ մի կեդրոնական ուսումնարան բանալ։ Մինչդեռ մեր ազգն այսօր այնպիսի վիճակի մէջ կը գտնուի որ մեծ գումարներ ծախսելով դպրոցների համար, պէտք է մեծ գործեր տեսնէ և պատրաստուի ապագայի համար, Եւդոկիայի բոլոր Թաղ. խորհուրդներն միասին կուգան և չը նայելով որ ամենն ալ միասին ահագին կարողութիւն կը կազմեն, երկար ստիպումներէ յետոյ կորոշեն ամսական 6 Օսմ. ոսկի ծախք անել վարժարանի համար...։ Եւ այդ չնչին գումար ոչ թէ իւրեանց քսակէ պիտի վճարուի, այլ եօթն եկեղեցիներու ունեցած հարստութիւններէն։ Այն քաղաք, այն ազգ որ այսչափ քիչ ծախք կուզէ անել վարժարաններու համար, յուսալի է թէ մի օր քաղաքական բարձր դիրքի արժանանայ։ Զը խաբեմք զմեզ։ Ինքնախաբէութիւնն ամենավնասակար բան է մի ժողովուրդի համար։ Երբ մեք չեմք աշխատիր մեզ համար դպրոցներ բանալ, տեսէք օտարներն ի՞նչպէս կաշխատին։ Խարբերդի Բողոքականներուն միսիոնար Պատուելի Հուլլը որ երեք տարիի չափ յառաջ Ամերիկա գնացած էր, այժմ Ամերիկայէն և Անգլիայէն 15,000 Անգլիական ստերլինգ ոսկի հաւաքեր է որ Խարբերդի մէջ մի բարձրագոյն կարգի ուսումնարան բանայ որպէս արդէն բացած են Կիլիկիայի Այնթապ քաղաքին մէջ*)։ Պատուելի Հուլլը տպագրական արտօնութիւն ալ ստացած է Բ. Դռնէն և Հայերէն տարերով և Քուրդերէն բարբառով Աւետարան և ուրիշ կրօնական գիրքեր պիտի տպէ և տարածէ Տէրսիմի Հայ Քիւրդերուն մէջ։ Արդէն Պօլսոյ ընկերութիւնն հրատարակած է քրդախօս և հայատառ մի Աւետարան, Պատուելի Մարտիրոս Շմաւոնեանի թարգմանել տալով. այժմ դարձեալ պիտի հրատարակեն աւելի լաւ տպագրուած։

«Այս առիթով կը յիշեմք Հրաշագործ Տիգրանեան վարդապետին 1866-ին հրատարակած «Զբռայէ Ըռօնին» (Լապտեր Լուսատու) գոր Հայ քիւրդերու մէջ պիտի տարածէր, և այդ նպատակի համար ալ բաւական դրամ հաւաքեց, արդեօք ի՞նչ պատճառաւ այդ լապտեր շուտ մարեցաւ. քանի՞ քիւրդ կարդացած է իւր հրատարակած քերական։ Երանի թէ քրդերէն գիտցող Հայ վարդապետներ շարունակէին Տիգրանեանի այդ գործ, բայց չը հետևէին նորա ընթացքին։ Ամո՞թ է մեզ դանդաղել, երբ օտարները վաղուց արդէն սկսած են գործել։ Պատուելի Հուլլը այժմ հաստատ կը լինի Խարբերդ. նա մեզ ուղեկից էր Սամսունէն մինչև Եւդոկիա. իւր հետ կը տանէր տպագրական մամուլ, տառեր, բնագիտական և տարրաբուծական գործիներ վարժարանի համար և ուրիշ մեքենաներ և դպրոցական ու տպագրական պիտոյքներ, որք երեսունի չափ ջորիներու վրայ բարձուած էին։ Զեմ ուզեր առանց յիշատակի անցնիլ այստեղ մի դէպքի վրայ։ Որովհետև Միսիոնարական ընկերութիւններն ծախք չեն խնայեր որպէս զի իւրեանց առաքած անձ պատուաւոր կերպիւ ճանապարհորդէ և բարձր դիրք ունենայ ժողովրդեան առջև, Բ. Դռնէն պուլրուլտու հանած էին Պատուելի Հուլլերի համար որ ուզած տեղեր իւր հետ ոստիկաններ ալ կը տանէր։ Այդպիսի պատուաւոր կերպով Ղավախ գիւղաքաղաքէն անցնելէ յետոյ՝ քառորդ ժամու չափ հեռացած էինք և ահա տեսանք որ Ղավախի կառավարական պաշտօնատարներէն մի քանին ձիեր հեծած, վազցուցնելով կը գային որ տեսակցին Պատուելի Հուլլերի հետ, կարծելով թէ նա «Անատոլույա կիաէն Ֆիրէնկ մէմուրի» է... Շատ ուրախ ենք որ այդ կողմի Թիւրք պաշտօնատարներ այդպիսի փութաջանութիւն ցոյց կը տան որ ամեն քաղաքավարական կերպերով յարգեն և պատուեն Հայաստան գնացող «Ֆիրէնկ մէմուրի»ներն, որպէս հարկ է. բայց ոչչափ գոհ և ուրախ պիտի լիներ ամեն մարդ, թէ դորա քառորդին չափ գոնէ փութաջանութիւն ցոյց տալով, ճանապարհորդներու կեանքն և ստացուածներն ապահովէին։ Քանի որ Զէրքէզներ տարածուած են այս կողմեր, ճանապարհորդները շատ անգամ կը կողոպտուին։»

*) Շատ կը ցանկայինք իմանալ թէ արդեօք Մկրտիչ կաթողիկոսին Այնթապի մէջ բացած դիշերօթիկ վարժարանն ինչ վիճակի մէջ կը գտնուի այժմ...։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Էրզրում, 2 Նոյեմբերի

Մի քանի օր առաջ եկաւ Էրզրում նոր գեներալ-կոնսուլ Նիկոլայ Լեոնտիեվիչ Օբերմիլլեր, իսկ երէկ՝ անգլիական հիւպատոս կապիտան-մնժիներ Տրոտտէր։ Իմ մասնաւոր խօսակցութիւնը երկուսի հետ ևս հաստատեցին ինձ այն եզրակացութեան, որ Էրզրումը պիտի դառնայ այսուհետև մի լայն ասպարէզ երկու զօրեղ դիպլոմատիական կուսակցութիւնների համար։ Ինտրիգաների նիւթ և դրդիչ պիտի լինի ի հարկէ հայկական խնդիրը, որը այդպէսով սառնում է քաղաքական կարևորութիւն և կիսաեւրոպական ինտերես։ «Մեզ համար խիստ դժուար պիտի լինի Անգլիայի հետ մրցելը, երբ վրա են հասնում նորա բեֆօրմները, ասեցի ես պ. Օբերմիլլերին» «Այո, այդպէս է, բայց այդ դիպուածում մենք խստիւ կը հսկենք թէ ինչ աստիճան անկեղծութեամբ և ժողովրդի պէտքերին համեմատ կը կատարվեն այդ բեֆօրմները և եթէ նոցանից յառաջացաւ հայերի բարօրութիւնը այն ժամանակ մենք սիրով կողջունենք նոցա, իսկ եթէ ոչ....(խօսքերը վերջացան բազմախորհուրդ ժպիտով)։ «Ստացել էք արդեօք որոշ հրահանգներ Հայաստանի մէջ գործելու համար» հարցրեցի ես։ «Ոչ, քանի որ յայտնի չէ ինչ ընթացք կը բռնէ Անգլիան» «Կարծում էք որ Հայաստանին մի առանձին նշանակութիւն կը տայ նա Փոքր-Ասիայի մէջ։» «Ո, անշուշտ, պատասխանեց. քանի որ հայերը միայն կարող են յաջողութեամբ մաքառել նոցա հարստահարական ընդունակութեան դէմ. եւ ես շատ կը ցանկանայի, շարունակեց նա, որ հայ լրագիրները միշտ տեղեկութիւն ունենային մեր բռնած ընթացքի վրա, ևս Ռուսաստանի և Պարսկաստանի հայերն էլ միախոհ լինէին այստեղինների հետ, ձևացնելով այդպէս մի անընկճելի ոյժ Անգլիայի կանող ազդեցութեան դէմ։» Այդպիսի մի մտքին հաւանանքս եղաւ պատասխան, երբ մեր հոգսը օտարները աւելի են տանում քան թէ մենք ինքներս։ «Ձեր քաղաքականութեան հայ լրագիրների հետևելը ձեր կամքից է կախված, նկատեցի ես, վասն զի այն ժամանակ հարկաւոր է որ դուք պարբերաբար տեղեկութիւններ հաղորդէք ձեր ցանկացած լրագրին։» Միւս օր պարոնը խնդրեց իրան չնորհաւորել «Մշակին» իր կողմից թղթակից դառնելու համար իր տիկնոջ սերտ բարեկամ, հայոց գրականութեան և լեզուին քաջահմուտ տիկ. Ֆեբրոնիա Հաղարապետեանին։ Ուրեմն ես իմ կողմից կը չնորհաւորեմ «Մշակին» այդպէս մի ընդունակ թղթակից վաստակելու համար.

Կասեմ ևս մի քանի խօսք անգլիացի դիպլոմատի մասին, որի հետ առաջի անգամից ունեցանք մի այնչափ բաց խօսակցութիւն, որ ի վերջոյ երկուսս էլ խիստ բաւական մնալով, համակրանքով թողեցինք միմեանց։ «Երևում է որ դուք Կովկասեցի էք, պարոն, հարցնում է ինձ խօսակիցս» «Այո և ազգաւ հայ»—«Օհո, այն էլ հայ, բացականչում է նա հետաքրքրութեամբ։» —«Ինչու՞ այդչափ զարմացմամբ էք հարցնում, ասում եմ։—«Որովհետև շատ եմ հետաքրքիր ձեր ազգին»—«Հետաքրքիր ինչպէս, տաճկապա՞ղ թէ ինչպէս մարդասէր անգլիացի։» Քիչ լռելով ու բաւական չփոթված երեսի վրա ժերկուսն էլ միատեղ» պատասխանում է արհեստական ժպիտով։—«Ուրիշ խօսքով ուզում էք ասել՝ և դահիճ և զթասիրտ»—«Ոչինչ խիստ համեմատութիւն է։»—«Դեհ շատ լաւ, շարունակում եմ, ուրեմն դուք կարծում էք որ Հնդկաստանի քաղաքականութիւնը կարելի կը լինի բանացնել և այստեղ» —«Ի՞նչպէս, սիրելիդ իմ պարոն։»—«Այսինքն յանուն մարդասիրութեան հայերի կրօնը պիտի դաւէք եկեղեցին երկպառակէք, ժողովուրդը այլայլէք, յանուն լուսաւորութեան արդիւնաբերական և առևտրական հաստատութիւններ հիմնէք, բայց հայերի մասնակցութիւնը նոցա միջից ամեն ջանքով արտաքսէք, յանուն մարդասիրութեան բեֆօրմներ մտցնէք, բայց նրա համար միայն որ նոցանով հայերի ձգտումները աւելի խիստ կաշկանդէք, մէկ խօսքով մտնելով Հայաստան նախ՝ ձեր նպատակը Տաճկաստանի օգտին պիտի ծառայացնէք, իսկ յետոյ....բայց աւելի ճիշդ ասած, մի և նոյն ժամանակ բոլորը դարձնէք դէպի ձեր սեփական շահերը. այդ չէ՞ ձեզ տուած հրահանգները»—«Ահ, պարոն, չը-նորհաւալ եմ ձեր բացախօսութեանց, բայց նոյն ժամանակ խիստ ցաւում եմ որ այդպէս նախապաշարված էք մեր դէմ, մինչդեռ մենք հաստատ ենք որ այդ ամենը սպառնում է հայոց Ռուսաստանի կողմից, որին և ասում են որ հայերը շատ չեն համակրում»—«Ո, ինչ չարաչար սխալմունք, բացականչեցի, դիտմամբ տեղիցս վեր թռչելով, եթէ այդ կարծիքի վրա էք ուզում հիմնել ձեր քաղաքական ընթացքը, քա՞ջ իմանաք որ բոլոր ձեր ջանքը չարդ ու փշուր կը լինեն այս երկրում ձեր սեփական աչքի առաջ, վասն զի յիրաւի հայերը մի այսպէս յանդուգն ազգ են, որ պատրաստ են ընդդիմադրել բոլոր աշխարհի, եթէ միայն նա ձեռնատուն կը լինի նոցա ազգութեան, բայց մեր տէրութիւնը միշտ եղել է հայերին սիրող, բարերար և պաշտպան, ինչպէս նոցա ազգութեան սկզբունքի, այնպէս և եկեղեցական»—«Իսկ մեր լրագիրներից երևում էր մինչև այժմ որ հայերը իրանց ազգ. համակրութիւնը և վստահութիւնը միայն Անգլիային են նուիրած։»—«Այո, քանի որ մինչև հիմայ կարծում էին որ Անգլիայի ձեռքից պիտի ընդունեն ինքնավարութեան չնորհը, քանի որ դեռ կատարելապէս չեն ճանաչած ձեր եսական և նիւթապաշտ հոգին, բայց ես հաստատ եմ որ շատ չի անցնի, երբ դուք կը տեսնէք որ հայերը այնպէս յիմար և կոյր մարդիկ չեն որ իրանց թշնամիներին սիրեն»—«Բայց դիցուք, պարոն, որ դուք սխալվում էք, դիցուք թէ մենք միայն բարիք պիտի բերենք Հայաստանի համար, այն ժամանակ, հարցրեց նա խարդախ ժպիտով։—«Այն ժամանակ... արդէն բնական է որ այն ժամանակ ձեզ կը սիրեն, կը պաշտեն և դուցէ սիրով կընկնեն ձեր գերկը, իսկ եթէ ոչ, կապիտան, եթէ դուք միայն խաբուսիկ ձեռերով պիտի վարվէք Հայաստանի հետ, ո՛, այն ժամանակ երդվում եմ՝ ամեն մէկ հայի կողմից այնպիսի մի ընդդիմադրութիւն կը գտնէք այստեղ, ինչպէս ձեր այժմեան պարլամենտի մէջ ազատականները ցոյց կը տան ձեզ և ի վերջոյ ոչ թէ կը յաղթէք, այլ կը ջարդվէք՝ որովհետև մեզ կօգնէ մեր բարերար տէրութիւնը, որին սիրում են ոչ միայն Կովկասի հայերը, այլ ևս Պարսկաստանի և Տաճկաստանի։» Այս երկար խօսքերից յետ դարձա նա դէպի ինձ այսպէս. «Սիրելիդ իմ պարոն, ես գնահատում եմ ձեր անկեղծ խօսքերը և մեկնում եմ ձեզ չնորհակալութեամբ իմ ձեռքը, վասն զի այդ ամենը ես ճանաչում եմ ոչ միայն իբր հաւանական բաներ, այլ միանգամայն ճիշդ, ահա ինչու, խնդրեմ ընդունէք իմ անկեղծ բարեկամական յարգանքը։» Իմ կողմից եղաւ նոյն առաջարկութիւնը և մենք բաժանվեցինք։ Քիչ անցրած ես լսեցի մաերիմ աղբիւրից որ մեր խօսակցութիւնը թղթի է անցած հիւպատոսի կողմից Լայարդին զեկուցումը տալու համար։ Թող...

Գրիգոր Նիկողոսեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼԱՀՈՐ, 22 Նոյեմբերի (4 դեկտեմբերի)։ Զալալաբադ դարդակված է։ Աֆղանիստանի ամենամօտ զօրքերը Կաբուլի մէջ են գրանվում։ Բէբէրաս երկու անգամ կանգ առաւ Պէյվարի և Կիտայի առաջ, սպասելով պաշարեղէնների։ Թշնամին ամուր դիրքեր է բռնել Պէյվարի անցքի բարձրութիւնների վրա։ Հայբերեան անցքից դեռ չեն ստացված լուրեր Ճակատամարտի մասին։

Կ. ՊՕԼԻՍ, 22 Նոյեմբերի (4 դեկտեմբերի)։ Խէյրէդին-փաշան մեծ վիզեր է նշանակվել, Տրիանսադէ-Էսադ շէյխ-ուլ-իսլամ, Գազի Օսման-փաշան պատերազմական մինիստր, Սայիդ-փաշան արդարութեան մինիստր, Կադրի-փաշան ներքին գործերի մինիստր, Կարաթէօդորի-փաշան արտաքին գործերի մինիստր, Սավադ-փաշան հասարակաց աշխատանքների մինիստր, վերջապէս Զեվդէդ-փաշան վաճառականութեան մինիստր։ Արտիլերիայի գլխաւոր կառավարչի նշանակութիւնը դեռ սպասվում է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 Նոյեմբերի։ «Правит. Вѣстн.» տպել է Նոյեմբերի 22-ին Բարձրագոյն մանիֆէստ, որով յայտնվում է թէ 9½ ժամին երեկոյեան Նորին Բարձրութիւն Թագաժառանգուհին բարեյաջող կերպով տպավեց երկունքից Միխայէլ անուանակոչված մի որդով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 Նոյեմբերի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 96 ր. 25 կ., երկրորդ 95 ր. 25 կ., երրորդ 95 ր., չորրորդ 95 ր. 12 կ., առաջին ներքին 5% փոխառութեան տոմակը արժէ 235 ր. 5 կ., երկրորդ 229 ր. 5 կ., արևելեան առաջին 92 ր., երկրորդ 91 ր. 25 կ., ոսկին 8 ր. 38 կ.։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ

որ գանվում էր Գոլովինսկի փողոցի վրա Սարաջևի տանը, այժմ գանվում է նոյն ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ, ՇԻՕԵՎԻ ՏԱՆԸ, գերմանական կլուբի և Վեսալիի լուսանկար խանութի մօտ մի և նոյն սանդուղքով: Այցելողների համար ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը: Հաւաքածուին ՆՈՐ ԲԱՆԵՐ ԵՆ ԱՒԵԼԱՑՐԱԾ:

11—25

Մամուլի տակից դուրս եկաւ

ՕՐԱՑՈՑՑ

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ 1879 Թ. համար.

Գինն է 15 կոպ. Հարիւրով գնողներին 20% զեղչումն կը լինի: Օտարաքաղաքացիք ճանապարհածախք վճարումն՝ հարիւր օրինակի համար — 4 ր „ յիսունի համար — „ 60 կ

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ“ ՀԱՅՏԻ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ՋԷԼՕԲԱՆԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԷԲԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԱՆ—ՇԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՆԻՆԳԻ ՊԱՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԵԿՈՎ:

Ծախվում է Կազանի ՏԱՐԱՆՏԱՍ: Վօրօն. ցօվկայեա Նաբերեժնայա փողոց կամուրջի մօտ, տուն № 3:

1—2

ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ և ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ փնտռում է դասերի համար կամ վարձով բնակարան և ուսելիք: Հարցնել կլասիկական Գիմնազիայի գործավարին:

1—5

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ»

ԱՄՍԱԳԻՐ

Հրատարակվում է ամիսը մէկ անգամ առանձին գրքոյկներով, իւրաքանչիւրը 4-6 թերթ:

Տարեկան գինն է 6 ր. ամենայն տեղ:

Հասցէն՝ Тифлисъ. Редакція Армянскаго журнала «Педагогическій Листокъ» Сололаки, Садовая улица, домь № 42.

Թիֆլիզում ստորագրվել կարելի է Գրիգորեանցի և «կենդրոնական» գրավաճառանոցներում, և Աբովեանց եղբարց խանութում:

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹԻ» յուլիս, օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների գրքոյկները (№ 1, № 2, № 3, և № 4) լոյս տեսան. ամսագրի նպատակը, ուղղութիւնը և պրոգրամը ցանկացողները կը գտնեն այդ գրքոյկների մէջ.

Գ. նոր բաժանորդները կը ստանան բոլոր գրքոյկները սկսած առաջինից:

Խմբագիր Յակոբ Տէր-Յովհաննիսեան

Ծախվում է մէկ մեծ երկաթի արկղ (կասսա) փողի համար: Գնի համար կարելի է տեղեկանալ Կաթոլիկների եկեղեցու դիմաց Մելիք-Նուբարովի տանը:

5—5

ՄԻ ՕՐԻՈՐԴ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է

և պատրաստում է աշակերտուհիներին ԲՈԼՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ փոքր դասատուների համար: Ընդունում է նոյնպէս ԳԻՇԵՐՕԹԻԿ աշակերտներ և աշակերտուհիներ 8—9 տարեկան: Հասցէն կարելի է իմանալ «ՄՇԱԿԻ» խմբագրատանը:

ОСОБА РЕПЕТИРУЕТЪ

и подготовляетъ во ВСѢ учебныя заведенія въ младшіе КЛАССЫ, а также принимаетъ ПАНСІОНЕРОКЪ или ПАНСІОНЕРОВЪ отъ 8—9 лѣтъ. Адресъ можно узнать въ редакціи „МШАКЪ“

ԹԻՖԼԻՍԻ „ՄԻՐՀՅԱՆԼԵՆ“ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀՈԳԵԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

յայտնում է, որ նոյեմբերի 10-ից մինչև 20-ը առաւօտեան 10—2 ժամը ուսումնարանի շինութեան մէջ (Կուկիայում, Վօրօնցօվսկայա Նաբերեժնայա փողոցի վրա) մնաց աշակերտները կենթարկվեն ՓՈՐՁՆԱԿԱՆ ՔՆՆԻՉ ԹԵԱՆԸ: Այս տարի բացվում է միայն ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ դասատուն:

Ուսումնարանը ընդունվում են բոլոր դասակարգերի ռուս ՀՊԱՏԱԿ ԵՐԵԽԱՆԵՐ: Պատրաստական դասատուն մտնելու համար պահանջվում է 11-ից մինչև 17 տարեկան հասակ, իսկ գիտութիւն կրօնից. գլխաւոր աղօթքներ ռուսաց լեզուից, աղատ ընթերցանութիւն և գրութիւն, թուաբանութենից. գործողութիւններ ամբողջ թուերով

ԳԻՇԵՐՕԹԻԿՆԵՐԻՆ ուսումնարանը առժամանակ չէ ընդունում:

Աշակերտների տարեկան ԹՈՇԱԿ նշանակված է տարեկան 10 ռուբլի: Ուսումնարան մտնելու համար խնդիրքները պէտք է հասցրակ Թղթի վրա գրված լինեն և տրվին ՎԵՐԱԿԱՑՈՒԻՆ, որ բնակվում է ուսումնարանի շինութեան մէջ: Խնդիրքի հետ պէտք է ներկայացնել մետրիկական վկայական:

Կարճ ժամանակամիջոցում աշակերտներին միջոց կը տրվի էժան գնով ուսումնարանի մէջ ճաշել:

3—3

ՕՐԱՑՈՑՑ

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ 1879 Թ. համար

Գինն է 1 ռուբ. արծ:

Մեր այս աշխատութիւնը լոյս տեսաւ և արդէն վաճառվում է

Ս. Պետերբուրգում Արժ. Գէորգ Քահ. Խանթարճեանցի մօտ:
Տֆխիսում պ. Զաքարիայ Գրիգորեանի
Շուշում պ. Մահտեսի Յակոբեանցի
Իսկ Երևանում մեր մօտ:
} գրավաճառանոցներում:

Շուտով դուրս կը գայ 1879 Թ. մեր ՕՐԱՑՈՑՑՆԵՐԸ 2 տեսակ. մեծադիր հանդերձ 1 պատկերով և ԾԱՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՑ Դ. տարի յաւելուածով. և փոքրադիր հանդերձ 2 նոր պատկերներով:

Եւս մօտ միջոցում կը հրատարակենք մի տեսակ ՔՆՆՈՒԹԵԱՄԲՔ ՊԱՏԱՍԽԱՆ և ՀԵՐՔՈՒՄՆ «Գրիչ» ստորագրութեան դէմ «Փորձ» № III-ի մէջ: Երևան Նոյեմբերի 1878 Թ.:

Աբգար Գուլամիրեանց

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ИМѢЮЩІЙ ВЫЙТИ ВЪ ДЕКАБРѢ НЫНѢШНЯГО ГОДА

РУССКІЙ ХУДОЖЕСТВЕННЫЙ И ЛИТЕРАТУРНЫЙ АЛЬМАНАХЪ

„КОМЕТА“

Содержаніе Альманаха будетъ слѣдующее: Отдѣлъ 1. *Общія календарныя свѣдѣнія.* (Святцы; перечень русскихъ святыхъ и мѣстночтимыхъ угодниковъ; митрополиты и патріархи русскіе; желѣзные дороги и пароходы; почта телеграфы: историческія, статическія и иныя свѣдѣнія; примѣты, обычаи и повѣрья на Рруси; бюджеты нашихъ земствъ за три послѣднія года; адресъ-календарь, и проч., и проч.). Отдѣлъ 11. *Литературный.* НОЧЬ ПОДЪ ПЛЕВНОЙ. Разсказъ В. И. Немировича-Данченко. РУССКІЙ БИВАКЪ ПОДЪ КОНСТАНТИНОПОЛЕМЪ. Сцены Г—ича НОВЫЯ СИЛЫ Повѣсть Ан. Григорьева. ИЗЪ ЖИЗНИ ПРОВИНЦІАЛЬНАГО ТЕАТРА. Наброски Н. Съ Стружкина. ПОДЪ ЗЕМЛЕЮ, Отрывокъ изъ романа „Русскій Монте-Кристо“ А. М. Д—іева. МИМОХОДОМЪ Сцены К. А. Тарновскаго. БАЛЕТЪ ПРИ СВѢТѢ ЛУНЫ. Изъ воспоминаній охотника С. С. Б—ова „БАТЮШКА ИВАНЪ НАЗАРЫЧЪ и МАТУШКА АГАФЬЯ ДМИТРЕВНА“. Очеркъ быта сельскаго духовенства Демокритова (псевдонимъ). ВИДѢНІЕ. Фантастическій разсказъ—скаго. *Въ деревнѣ.* Фельтонъ Я. Б. *Петербургскія замѣтки* Фельетонъ Н, *Наши думцы.* Фельетонъ А. Д. К. *Московскій листокъ.* Фельетонъ „Зрителя“. *Ито, и се.* Фельетонъ А. П.

Всѣ названныя статьи написаны исключительно для нашего альманаха, Свои стихоренія намъ обѣщали: Н. Л. Пушкаревъ, Л- Г. Граве, Л—ръ, и многіи другіе. Въ числѣ переводныхъ статей, *между прочими,* будутъ: новый разсказъ Альфонса Доде очеркъ Пьера Верона, и нѣсколько отрывковъ изъ книги Рембо «Русская Исторія». Отрывки эти будутъ выбраны такимъ образомъ, что читатели ознакомятся со всѣми отдѣлами этой крайне интересной книги. *Смѣсь.* Анекдоты, маленькія стихотворенія, шутки, отсроты, и проч. Отдѣлъ III. *Художественный* Картины: К. А. Трутовскаго—*„Лѣтнею ночью“*: Н. В. Неврева—*„Роковая встрѣча“*; Вл. Е. Маковскаго—*„Пріятельская пирушка„*: Степанова. П. С.—*„Саввинъ Сторожевскій монастырь“*; Н. И. Грибкова—*„ Ссора Иванъ Ивановича съ Иваномъ Никифоровичемъ“*, и историческій эскизъ Н. С—а. картина Неврева—до сихъ поръ не вышла изъ мастерской художника, а гг. Трутовскаго, Степанова и С—а написаны для нашего альманаха *). Кромѣ этихъ произведеній будутъ помѣщены рисунки нашихъ извѣстныхъ художниковъ-каррикатуристовъ, работающихъ въ русскихъ сатирическихъ журналахъ —гг. Богданова, Чичагова, Кланга. Виноградова, и друг. И эти рисунки исполнены исключительно для «Кометы». Въ текстѣ Альманаха будетъ, кромѣ того, множество мелкихъ рисунковъ.

Какъ новость, мы напечатемъ въ Альмянахѣ *до 300* fac-simile (точный снимокъ съ почерка наиболѣе выдающихся политическихъ дчятелай, ученыхъ, писателей, музыкантовъ, художников, артистовъ, и проч. Перечислятъ имена всѣхъ ихъ, заняло бы слишкомъ много мѣста, а потому мы укажемъ только на нѣкоторыхъ. Въ числѣ ихъ мы назовемъ: Политическихъ дѣятелей: Наполеона III; имп Евгеніи; Пія IX; Макъ-Магона; Тьера; Гамбетту; герцоговъ Брольи и Деказъ: Бюффе; Эм. Жирардена; Луи Блана; Жюль Симона: Греви; Бисмарка; Мольтке; Гурко; Радецкаго, Скобелева 2, ит. д Ученыхъ и писателей: Виктора Гюго Ал. Дюма; Ал. Доде; Ренана; Эркмана—Шатріана; Жюль Симона; Эм. Золя; Эм. Ожье, Литре; Легуве; Окт. Фелье; Фр. Сарсе; Л. Фигье; Поль-де-Кока; Жоржъ Зандъ; Ал. Карръ; Г Дроза; Клодъ Бернара, Вирхова; Дарвина; Нелатона; Пушкина; Лермонтова; Грибоѣдова; Гоголя Островскаго; Тургенева; Некрасова; Щедрина; Гончарова; Диккенса; Теккерея, и др. Музыкантовъ, художниковъ, актеровъ и пѣвцовъ: Глинку; Даргомыжскаго; Сѣрова; Верстовскаго; Чайковскаго; А- и Н. Рубинштейновъ; Берліоза; Россини; Гуно; Викт. Массе; Амбр. Тома; Ф. Давида; Верди; Вагне ра; К. Таузига; Вьетана; Юхима; Мошелесса; Сивори; Пол. Віардо; Листа; Литольфа; Рашели; Ристори; Росси; Щепкина; Живокини; Садовскаго; Шумскаго; Ѳедотовой К. Н. Васильевой; Самоилова; Бозіо; Патти (ею сочиненный и писанный романсъ); Лукка; Нильсонъ; Герстеръ, Тамберлика, и проч. и проч,

Чтобы собрать эту массу fac-simile, Редакція Альманаха приходилось покупать инои разъ ради одной подписи цѣлыя сочиненія. Выпуская такой Альманахъ, мы не безъ основанія разсчитываемъ конкуроривать съ знаменитыми англійскими изданіями въ этомъ же родѣ, Что каждый изъ шести *первыхъ* расунковъ- будетъ достоинъ рамки, за это могутъ быть порукою имена художниковъ—любимцевъ нашей публики, о произведеніяхъ которыхъ русская пресса всегда отзывается весьма сочувственно-

Подписавшіеся на Альманахъ до 20-го декабря платятъ за него 2 р. съ пересылкою; въ отдѣльной продажѣ цѣна ему назначается 3 р.

Въ Москвѣ подписка принимается: у И. Г. Соловьева; въ центральномъ книжномъ магазинѣ; у И. И. Смирнова, и у М. О. Вольфа. Иногородные подписчики требованія свои адресуютъ *исключительно* къ редактору-издателю альманаха—А. М. Дмитріеву, въ Москву на 3-ю Мѣщанскую, д. Тимофѣевскихъ.

Объявленія принимаются въ редакцій журнала „Свѣтъ и Тѣни“ а также и у издателя, только до 15-го декабря. Впереди текста цѣна: за страницу (60 строкѣ отъ 60—70 буквъ) 40 р.; за полъ-страницы—25 р., и за четверть—15 р.; въ концѣ книги: за страницу 35 р.; и за полъ-страницы—20 р., и за четвертъ—12 р.

Примѣчаніе. Альманахъ будетъ отпечатанъ въ количествѣ 12 т. экземпляровъ.

*) Всѣ шестъ картинъ этихъ, размѣровъ въ большой полулитсъ, исполены будутъ хромолитогрфіей—въ нѣсколько красокъ.

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ հարկաւոր է մէկ ԼՐԱԳԻՐ ՏԱՐԱԾՈՂ: Պայմանների մասին կարելի է տեղեկանալ ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան ժամի 10-ից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ:

ВЪ РЕДАКЦІИ «МШАКЪ» НУЖЕНЪ РАЗНОЩИКЪ.

Շուտով լոյս կը տեսնէ պ. ՑԱՐՈՑԻ «Հայոց Մամուլը Ռուսաստանում և Կովկասի մէջ» «Обзоръ» ռուս լրագրում տպուած յօդուածի հայկական բնագիրը առանձին բրօշիւրով:

ԳՐԻԳՈՐ ՆԱՍԻՐԵՆՑԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՒԱՆՈՒՄ ՀՈԳԵԲԱՐՁԱԿԱՆ ՎԱՐ

ստացել են մեծ քանակութեամբ ՖՐԱԿԻ ԵՒ ՏՐԻԿՕԻ ՍԻՒՐՏԻԿՆԵՐԻ ՇՈՐԵՐ, որսորդական ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺՕԿԵՏՆԵՐ, ձմեռային ՊԱԼՏՈՆՆԵՐ և ՎԱՐՏԻԿՆԵՐ, երեխայոց հագուստներ, ՎԵՐԱՐԿՈՒ—ԽԱԼԱՏՆԵՐ զարդերով, նոյնպէս ընդունվում են ՊԱՏՈՒԷՐՆԵՐ զենուորական և քաղաքական հագուստների համար: Ցոյս ունեմ, որ ինչպէս պատուիրողները նոյնպէս է գնողները ԲԱՒԱԿԱՆ ԿԸ ՄՆԱՆ:

11—75

ՍԱՆՆԵՔԵՐԻՄ

ԹԱԳԱՒՈՐ ՀԱՑՈՑ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Ողբերգութիւն 5 արարուածով.

Գինն է 1 ռուբ. արծ:

Մեր այս աշխատութիւնը լոյս տեսաւ և արդէն վաճառվում է

Ս. Պետերբուրգում Արժ. Գէորգ Քահ. Խանթարճեանցի մօտ:
Տֆխիսում պ. Զաքարիայ Գրիգորեանի
Շուշում պ. Մահտեսի Յակոբեանցի
Իսկ Երևանում մեր մօտ:
} գրավաճառանոցներում:

Եւս մօտ միջոցում կը հրատարակենք մի տեսակ ՔՆՆՈՒԹԵԱՄԲՔ ՊԱՏԱՍԽԱՆ և ՀԵՐՔՈՒՄՆ «Գրիչ» ստորագրութեան դէմ «Փորձ» № III-ի մէջ: Երևան Նոյեմբերի 1878 Թ.:

Աբգար Գուլամիրեանց

ՕՐԱՑՈՑՑ

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ 1879 Թ. համար ԵՐԵՒԱՆՈՒՄ կարելի է գնել Արսէն Մելիք-Քիշմիրեանցից:

2—3

Дозволено Цензурою 24 Ноября 1878 г. Тифлисъ Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ